

## 40. ԳՅՈՒՍԻ, ԹՈՓԱԼԻ ՈՒ ԳՈՌԻ ՆԱՂԱԼ

Մի բաղրկյան կար, իրա մեռնելու վախտը կանչեց տղին, ասեց.— Որթիս, քեզ վասիաթ եմ անըմ, որդե առուտուրի կէթաս՝ գնա՛, Հալեպու քաղաքը մի էթա:

Հերը մեռավ, տարան թաղեցին, տղեն բեռները բարցեց, ամեն քաղաք գնաց առուտուրի: Էկավ տուն, ասեց.— Ազի՛, ես պըտի էթամ Հալեպու քաղաքը:

Ասեց.— Ա՛յ որթի, քու հերը քեզ վասիաթ արեց՝ Հալեպու քաղաքը չէթաս:

Ասեց.— Ճար շկա, պըտի էթամ:

Տղեն հարց ու փորց արեց, թե ինչ բան ընտեղ գնով կծախվի, ասին.— Եիմշատ փետը շատ թանգ ա ծախվըմ Հալեպըմը:

Տղեն առավ քառասուն ղաթրի բեռ շիմշատի փետ, բարցեց, ասու անըմը տվեց, ընկավ ճամփա:

Գնաց, շատ ու քիշը աստված դիտեր, մոտիկացավ Հալեպու քաղաքին, մի խան կար քաղաքից դրսն, խանի նորարները էկան բեռների հառաջը կտրեցին, թե.— Քաղաքի խաները փակած կըլի, հըմի բերեք բեռները ըստեղ վեր ածեք, քշերն ըստեղ կացեք, առավուրը շատ թեզ կէթաք քաղաք:

Բեռները վեր ածեցին, Թոփալն էկավ տեհավ, որ բեռները բոլորը շիմշատ փետ ա, մի բեռը գողացավ, կեսը տարավ լցրեց օջաղը, կեսն էլ դրեց թախտի տակը:

Էկան էտ մարթիկը հաց կերան, Թոփիալն էկավ ասեց.— Էտ ի՞նչ ա ձեր բեռները,— Ասեց.— Մեր վառելիքը բոլորը դրանից ա, խեղճ մարթ, ահազին ծախս ա քաշել, ահազին քրեհ ա տվել, աղը բարցել ա՝ տանըմ ա Կողըմն ա ծախըմ: 'ԵՇ',— ասըմ ա,— հոքս մի՛ հանի, էս բաղիովը օխտը ոսկի կտամ քեզ, քու ծախսդ էլ ա դուա կգա:

Էտ տղեն մտածեց, ասեց.— Ես օխտը բաղիա ոսկին առա ըստեղան ետ դառա, ես էթամ մեր բաղաքը, կասեն. «Դնացիր Հաւապու բաղաքը ի՞նչ տեհար», ի՞նչ պատմեմ: էթամ բաղաքը տեհամ, ետ դառնամ էթամ:

Գնաց մտավ բաղաքը, էս կողմը ման էկավ, էն կողմը ման էկավ, իրա խելքին մի ընենց մարթ չկարեցավ գտնի, որ դրանից խորուրթ հարցնի: էթալիս տեղը բիրդան տեհավ մի դուքանի միշի մի հալիվոր մարթ դուքանըմ առուտուր ա անըմ:

Ասեց.— Բար' աչողըմ քեզ:

— Բարե, հազար բարե էկար, դարիբ ախպեր: Ո՞րտեղանցի ես:

— Ես,— ասեց,— էրևանցի եմ, Փարպի գեղիցն եմ:

— Բա ի՞նչ գործով ես էկել:

Ասեց.— Էկել եմ բաղաքը ման գալու, — ասեց,— բիծա, քեզ շիմշատ փե՛տ կոմենա՞ք:

Ասեց.— Խնչքա՞ն:

Ասեց.— Մի տասը փութ, հինգ փութ:

Ասեց.— Ա՛խպեր, ըստեղ տասը փըթով, հինգ փըթով շինի. շատ ըլի՛ շորս հինգ գրվանքա, շատ էլ թանգ ա, մսխալը կաժինա հինգ մանեթ:

Ասըմ ա.— Ափի՛, վիրե՛ աստված, ներքե՞ն դու, ես բերել եմ քառասուն զաթրի բեռ, բաղաքից դրսկ խանի միշին բեռները վեր եմ դրել, իրիկունը բեղարած զնացել ենք հաց ենք կերել, մի Թոփիալ կար, չեմ իմանըմ խանի տերն էր, թե ով էր, ինձ ասեց թե. «Մեր բաղաքըմը էտ փետը մուֆթա ա, վառըմ են», ու տարավ շանց տվեց, որ օշաղը լիքն էր, թախտի տակը լիքն էր: Շատ որ երկար խոսացինք, տեհավ որ ես շատ միտք եմ անըմ, ասեց. «Մի՛ միտք անիր, աստված ողորմած ա, հազարից մի հետ որ էրևանուց էկել ես Հալեպ, մեր բաղաքի հըմար պակասութուն կըլի, որ դու ըստեղան ետ դառնաս», բերեց մի բաղիա, ասեց. «Մրանուլ օխտը ոսկի կտամ

քեզ: Հըմի բնոներս ընտեղ բոնված ա: Ափի, մի ճար արա՛, բալքի  
իմ բնոներս ընտեղան աղատես:

Ափին ասըմ ա:— Որթի, էտ շատ դժար ա, նրա հըմար, որ  
նրանք հիրեւ ընկեր են, բանի ըտենց մարթիկ են էկել, թալանել  
են: Հըմա քեզ որ ճար անի՛ նրանց աշխին ճար կանի. գնա աշշու  
կուշտը:

Էտ տղեն զնաց էտ աշշու կուշտը, ասեց.— Վիրե՛ աստված,  
ներքին դու, ես իմ ձեռը բցել եմ քու փեղը<sup>1</sup>, կամ ձեռս կտրի, կամ  
փեշդու էս նեղ տեղիցը ինձ աղատա, ինչ որ ուղես՝ կտամ:

Աշխին ասեց.— Ես քու ջանսաղութունը կուզեմ. ես քեզ հաս-  
տատ խոսք եմ տալի, որ քեզ աղատեմ: Քշերը կէթաս էն մի օթա-  
խը, որ քնիլ պըտես, էտ օշաղի ծակը բաց կանես, անգաճդ դեմ  
կանես ընտեղը, Թոփիալը, Թյոսեն, Թոռը կգան Խեր-Սոյլամազին  
կխոսացնեն, էն վախտը անգազ կդնես, թե Խեր-Սոյլամազը ինչ  
պըտի ասի. էն ասածը կանես:

Տղեն էկավի, աշշու ասածը կատարեց, օշաղի ծակը բաց արեց,  
անգաջը դեմ արեց:

Թոփիալը, Թյոսեն, Թոռը թերեցին Խեր-Սոյլամազին; ասեցին.—  
Խեր-Սոյլամազ, էրևանցին քառասուն բեռը շիմշատ ա բերել, քա-  
ռասուն բերին մենք օխտը բաղիա պըտի ոսկի տանք: Քառասուն  
բեռը ի՞նչը ան ոսկի կրոնի, մենք ինչքան կհարստանանք:

Խեր-Սոյլամազն ասեց.— Նա էրևանցի ա, ամեն քաղաք, ամեն  
տեղ ման աք էկել, դուք որ ըտղար գիտեք, նա ձեր ութ ղղար կի-  
մանա. բալքի նա ասեց. «Օխտը բաղիա ոսկի շիմ ուղըմ, օխտը բա-  
ղիա լու եմ ուղըմ», ո՞րտեղան կտաք էտքան լում:

— Ա՛յ ձեր տունը շինվի, — ասեցին, — նա էտղդարը ո՞րդիան  
կմտածի կասին:

Հըմա էտ մարթը էն ծակովը լսոմ էր:

Առավլոտը լիսը բացվեց, էտ տղեն վեր կացավ գնաց տանու-  
տերի կուշտը, ասեց.— Ես ըսօր տասը օր ա էկել եմ, իմ քառասուն  
բեռս ըստրանք բանդ են արել, կա'նչա տենանք ի՞նչ են տալի, ես  
տան-տեղի տեր եմ, վե կենամ էթամ:

Տանուտերը կանչեց Թյոսին ու Թոփիալին, ասեց.— Էս մարթուն  
ինչ տալու եք խի՛ շեք տալի, որ էթա:

<sup>1</sup> Բնագրում տպագրված է ձեռը, հավանաբար վրիպակ է, (ծանոթ. կազմողի):

**Ասեց.**— Օխտը բաղիա գուան պարտական ենք ոսկի տալու

**Ասեց.**— Ես փողի կարոտ չեմ, ես ապրանքներ շատ ունեմ, իմ շոբաններս քնըմ են, ապրանքս ծնելու վախտը վնասվըմ են, չտ մարթիկը որ խոստացել են օխտը բաղիա ոսկի տան, թող տեղը օխտը բաղիա լու տան, շորսը՝ էք, իրեքը՝ որց:

Հտեղ էտ մարթիկը գնացին Ապարան՝ լու հավաքելու, մեկը բռնըմ ին, բերըմ դնըմ բաղյի մեշը, մտիկ են տալի թե՝ որց ա թե՝ էք՝ թռնըմ, փախչըմ էր: Էտ մարթիկերանց ճարը կտրվեց, թողացին փախան ըտրա մոտից:

Էտ տղեն գնաց իրա ապրանքի մոտը, համա էտ Թոփաւը, Քյոսեն, Քոռը գնացին մի մարթ քթան, կանչին դրան փող տվին, հարուր մանեթ, մի ձեռք լավ շոր:

**Ասին.**— Էտ էրևանցին ինչ տեղ կէթա հաց ուտելու, դու էլ կմննես ընդե. ինչ որ նա կուզի, դու էլ կուզես, վերը դրա ավալախրը կիմանաս, կգաս մեր կուշտը:

Էտ էրևանցին էր՝ ման էկավ, ման էկավ, մտավ մի միկիտան. ըտե հաց ուզեց, մի բութիլ էլ գինի, նստեց իրա հացը ուտելու, էտ մարթը դրա եննուցը ալբիալը մտավ դրա միկիտանը. տեհավ էրևանցին ինչ ա ուտըմ ինքն էլ ուզեց:

Ուտելու վախտը դրա կենացը խմեց, ասեց.— Ախպեր, քո՛ւ կենացը:

Նա էլ նրա կենացը խմեց: Ըտե իրար հետ դոստացան, էտ էրևանցուն պատմիլ տվեց իրա ամեն հանգամանքը: Ընե էտ մարթը, որ էրևանցու ամեն հանգամանքն իմացավ, էկավ պատմեց Քոռին: Էտ Քոռն էր՝ էքսի օրը քուշումը էրևանցու հառաջը կտրեց:

**Ասեց.**— Բա՛րով, Մարտիրոս շան, հերդ, մերդ ո՞նց են. ֆլան բարեկամդ, ֆլան ծանոթդ,

Էտ տղեն զարմացավ, մնաց:

**Ասեց.**— Գոհութուն ասսու, փափագով ուզըմ ի քեզ տենայի, հըմի տեհա: Ես էն վախտը, որ ձեր տանն ի, դու նոր էլար մորիցդ, հաշկիդ մինը փուլ էր, իմը հանի, դրի քու հաշկի տեղը:

Հտիան դա վե կացավ գնաց դուզ տանուտերի կուշտը:

**Ասեց.**— Տանո՛ւտեր, էրևանցի Մարտիրոսը, որ նրանց տանը ծառա ի, դա մորիցը ծնվեց, հաշկի մեկը փուլ էր, իմ հաշկը հանեցի տվի նրան: Մինչի հըմի պահել ի, յոլա ի էթըմ, հիմի կարը շեմ: Ինթրըմ եմ իմ հաշկը առնեք տաք ինձ:

Ըստե տանուստերը կանչեց էրևանցուն:

Ասեց.— Էս մարթը մեր տունն էկել ա, հըմա ես շեմ գիդըմ:

Ասեց.— Էս մարթն ասըմ ա՝ զու հաշկի մեկը սրանն ա, հըմի ուղըմ ա, ի՞նչ ես ասըմ:

Ըստի դա մի օր ժամանակ խնթրեց:

Էտ տղեն զուզ գնաց հալիվոր զուքանչու կուշտը:

Ասեց.— Վիրե՛ աստված, ներքե՛ զու, ինձ մի ճար արա:

Ասեց.— Թե ճար անի՞ էն աշլին կանի:

Գնաց աշլու կուշտը:

Ասեց.— Վիրե՛ աստված, ներքե՛ զու, ինձ մի հետ ազատել ես, էս հետ էլ պըտի ազատես:

Ասեց.— Էլեղ կէթաս էն օթախըմը օշաղի ծակը բաց կանես՝ ընդիան անգաջ կանես. Թոփալը, Քյոսեն, Թոռը պըտի էլի Խեր-Սոլլամաղին խոսացնեն: Ընտե կիմանաս՝ ինչ ա ասըմ, էն էլ կանես:

Տղեն իրա վախտին գնաց էտ օթախը, էտ ծակը բաց արեց, անգաջ դրեց, տեհավլ դրանք Խեր-Սոլլամաղին բերին խոսացրին:

Ասեց.— Էրևանցին Թոփալի ձեռիցը պրծավլ, Քյոսի ձեռիցը պրծավլ, տեհանք իմ ձեռիցը ո՞նց ա պրծնըմ:

Ասեց.— Նա էրևանցի ա, զուք նրա հետ չեք կարա:

Ասեց.— Էլ նա ի՞նչ կարա անի, որ իմացավլ, թե հաշկը պըտի հանեն, կթողա կը փախչի:

Ասեց.— Խի՞ ա փախըմ, կասի. «Շատ լավ. իմ մի հաշկն էլ հանեք, Թոռի էն մի հաշկն էլ հանեք, դրեք կշեռքը կըշուք, թե որ բարերար ըլի, տվեք նրանք:

Էքսի օրը տղեն հենց ըտենց էլ ասեց:

— Բե՛րեք, իմ մի հաշկն էլ հանեք, նրանն էլ, զնենք կշեռքը կըշունք, թե որ բարերար էլավլ, նրանն ա, տվե՛ք նրան:

Թոռը էտ որ լսեց, մհանեն զուռն արեց ու զուա էկավլ. վե կալավլ Թոփալին ու Քյոսին, ու էն էթալն էր որ զնաց. մինչի հըմի էլ, որ էրևանցու անըմն են լսըմ, թողըմ, փախըմ են:

Նոր ըտե էտ տղեն իրա բեռները ծախեց, մի բեռը տվեց աշշուն փեշքաշ, էտ քյարվանսարեն էլ թողաց դրան, իրա բեռները ոսկի շինած, ետ դառավլ իրանց վաթանը:

Նրանք հասան իրանց մուրազին, զուք էլ հասնեք ձեր մուրազին:

Ըտե ասսանից իրեք խնձոր վեր ընկավլ, մեկն՝ ասողին, մեկը՝ լսողին, մեկն էլ՝ անգաջ դնողին: